# ԱԶԴԱԿ

ԲԱՑԱՌԻԿ 28 ՄԱՅԻՍ 2018

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

# 100-ԱՄԵԱԿ

# 1919 ՄԱՅԻՍԻ 28-Ի ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պատմական ճակատագիրի բերումով դեռեւս Դ. դարի վերջին Մեծ Հայքի թագաւորութիւնը բաժանուեց աշխարհակալ տէրութիւնների՝ Պարսկաստանի եւ Հռոմի միջեւ: Այդ ժամանակաւանից շրջանառութեան մէջ մտան Արեւմըտեան եւ Արեւելեան Հայաստան եզրոյթները, որոնք հետզհետէ աշխարհագրականից վերածուեցին քաղաքական հասկացութիւնների: Ցաւօք, 1555-ին Ամասիայի հաշտութեամբ, երբ Հայաստանն առաջին անգամ տրոհուեց Օսմանեան կայսրութեան եւ Սէֆեան Իրանի միջեւ, հայ ժողովրդի քաղաքական երկփեղկուածութիւնն աւելի խորացաւ: Այդ հողի վրայ նկատուեց ոչ միայն սովորութային-կենցաղային որոշ օտարացում, այլեւ ի յայտ եկան որոշակի տարբերութիւններ նաեւ լեզուամտածողութեան մէջ: Պատահական չէ, որ գրաբարի հիմքի վրայ պատմական նոր շրջափուլում՝ 17-18-րդ դարերում միջին հայերէնը ծնունդ տուեց աշխարհաբարի երկու ճիւղերին՝ արեւմտահայերէնին եւ արեւելահայերէնին: Առաջինի համար հիմք ծառայեցին պոլսահայ, երկրորդի համար՝ Արարատեան ու թիֆլիսահայոց բարբառները, որոնք հայ դասական գրական դէմքերի կողմից 19-րդ դարի երկրորդ կէսին հասցուեցին կատարելութեան:

19-րդ դարի վերջին քառորդից՝ պայմանաւորուած Հայկական հարցի միջազգայնացումով, ազգային-ազատագրական գաղափարների ու շարժման հետագայ տարածմամբ ազգային միասնութեան ձգտումն աւելի խորացաւ: Բազմաթիւ արեւելահայեր՝ Անդրկովկասի տարբեր գաւառներից զինուորագրուեցին արեւմտահայութեան ազատագրական պայքարին՝ Սեւքարեցի Սագօ, Նիկոլ Դուման, Սարգիս Մեհրապեան, Հաճի Լեւոն, Իշխան Արղութեան, բազմաթիւ կուսակցական նշանաւոր գործիչներ՝ Քրիստափոր Միքայէլեան, Սիմոն Զաւարեան, Ռոստոմ եւ այլք: Նմանապէս 20-րդ դարի սկզբին արեւմտահայ գործիչները յայտնուեցին հայ եկեղեցու եւ ողջ Անդրկովկասի հայութեան պաշտպանութեան դիրքերում հակացարական ելոյթների եւ հայ-թաթարական կռիւների շրջանում՝ Սեբաստացի Մուրատ, Արմէն Գարօ (Գարեգին Փաստրմաճեան), Համազասպ (Սրուանձտեանց), Արշակ Գաւաֆեան՝ Քեռի եւ այլք: Հայ յեղափոխական դաշնակցութեան կողմից 1904-ին «Կովկասեան ծրագիր» ընդունումը հանդիսացաւ այդ գաղափարական ու գործնական միաւորման փաստաթղթային-իրաւական արտայայտութիւնը:

Նիկոլ Դուման եւ իր խումբը

Անդրանիկ

Սեբաստացի Մուրատ

Քեռի

Հետագայում՝ 1912-ին հայ հոգեւոր եւ հասարակական-քաղաքական շրջանակների կողմից հայկական հարցի, այն է՝ հայկական բարեփոխումների իրագործման խնդիրը եւս առաջադրուեց որպէս մէկ միասնական, համահայկական խնդիր: Սակայն հետզհետէ, մասնաւորապէս Արեւմտահայերի ազգային պատուիրակութեան (նախագահ՝ Պօղոս Նուպար) գործունէութեան հետեւանքով միեւնոյն խնդրի վերաբերեալ ի յայտ եկան ոչ այնքան տարբեր, որքան ինքնուրոյն մօտեցումներ:

Իշխան Արղութեան

Առաջին աշխարհամարտի տարիներին, չնայած պատերազմում չէզոքութիւն պահպանելու կուսակցական շրջանակների, յատկապէս դաշնակցութեան 8-րդ Ընդհանուր ժողովի որոշման (1914 յուլիս), ռուսական արքունիքի ջանքերի շնորհիւ կովկասահայութեան զգալի մասը հակուեց պատերազմում ռուսական զօրքերի կազմում՝ թուրքերի դէմ կռուելու մարտավարութեանը: Այդ հանգամանքը, անշուշտ, ազգային գործիչների մի մասն իրաւացիօրէն նկատեց վտանգաւոր՝ համոզուած լինելով, որ դրանով իսկ օսմանեան իշխանութիւններին ընձեռւում է առիթ ու հնարաւորութիւն՝ դաւաճանութեան մեղադրանքով արեւմտահայութեանը բնաջնջելու համար: Պատահական չէ, որ ստանալով Թիֆլիսի հայոց ազգային Բիւրոյի անմիջական ղեկավարութեամբ Արեւելեան Հայաստանում ու Անդրկովկասի այլ շրջաններում կամաւորական շարժում ծաւալելու լուրը, Վանում գտնուող Յովհաննէս Քաջազնունին բացասաբար արձագանգեց՝ ասելով, որ «ռուսահայերը կրակի հետ են խաղում»: Ցաւօք, նա այս հարցում չսխալուեց: Օսմանեան իշխանութիւններն առիթը բաց չթողեցին իրականացնելու արեւմտահայութեանը ցեղասպանելու եւ

հայրենազրկելու իրենց դիւային ծրագիրը: Ընդհանուր յուսահատութեան մթնոլորտում ոմանք փորձեցին կատարուածի ողջ մեղքը բարդել արեւելահայ գործիչների վրայ: Ընդ որում այդպիսի մեղադրանքներ հնչեցրին նաեւ այն արեւմտահայ գործիչները, որոնք կամաւորական շարժման ամենակարկառուն դէմքերից էին (օրինակ՝ Անդրանիկը պատերազմի օրերին մեղադրում էր ոչ միայն ռուսական հրամանատարութեանը՝ Մուշ - Սասունի հայութեանը օգնութեան չգնալու, այլեւ արեւելահայութեանը):

Ինչեւէ, ակնյայտ է, որ Հայոց մեծ եղեռնից յետոյ արեւելահայ-արեւմտահայ «հակամարտութեան» մէջ աւելացաւ նաեւ բարոյազգացական կողմը, որը, դժբախտաբար, իր կնիքը թողեց հետագայ ողջ դարաշրջանի վրայ: Դժուար չէ նկատել, որ այդուհետ հայ հասարակական կեանքի երկփեղկուածութիւնը խորացաւ: Արդէն 1917 մայիսին արեւմտահայերն իրենց «սեպարատ» համագումարում հռչակեցին Արեւմտահայոց ազգային խորհրդի ստեղծումը՝ Վահան Փափազեանի (Կոմս) գլխաւորութեամբ: Նոյն թուականի սեպտեմբեր-հոկտեմբերին ստեղծուեց Արեւելահայերի (Թիֆլիսի) հայոց ազգային խորհուրդը (նախագահ՝ Աւետիս Ահարոնեան): Նկատենք, որ միաժամանակ ծնուեցին նաեւ այլ ազգային խորհուրդներ ըստ տարածաշրջանների՝ Պաքուի, Երեւանի, Ախալքալաքի եւ այլն: Ստացւում է, որ մի դէպքում հիմնւում էին հայ ժողովրդի երկու հատուածների առանձին կառոյցներ, միւս դէպքում՝ Անդրկովկասի իւրաքանչիւր տարածաշրջան կամ քաղաք ունենում էր իր ազգային մարմինը:

Յատկանշական է, որ Արեւելահայ ու Արեւմտահայ ազգային խորհուրդների համագործակցութեան հարցը սերտօրէն կապուեց տուեալ ժամանակի պատմական անցքերի զարգացման հետ: Այսպէս, 1917 հոկտեմբերի սկզբին, երբ ժամանակաւոր կառավարութեան հայանպաստ քայլերն Արեւմըտեան Հայաստանում տուել էին իրենց առաջին պտուղները (շուրջ 387 հազար հայ գաղթականների վերադարձ իրենց հայրենի օճախներ, արեւմտահայ գաւառներում հայերի գործուն մասնակցութեամբ ռազմավարչական մարմինների ստեղծում, հայկական գինական ուժի ձեւաւորում եւ այլն), հայաթափուած հայրենիքը համատեղ ջանքերով վերաշինելու արեւելահայ ու արեւմտահայ խորհուրդների համագործակցութեան դրսեւորումներն աւելի յաճախակի դարձան:

Սակայն 1918 մարտ-ապրիլին՝ թուրքական զօրքերի յարձակումը կասեցնելու անյաջող փորձերի օրերին, փոխադարձ մեղադրանքներն աճեցին: Արեւմտահայ գործիչները (Անդրանիկ, Սեպուհ, Սեբաստացի Մուրատ եւ այլք) պնդում էին, որ արեւելահայերն իրենց միայնակ թողեցին թուրքերի դէմ, առանց դիմադրութեան թշնամուն յանձնեցին բաւական լաւ ամրացուած Կարսի բերդը եւ նահանջեցին մինչեւ Արարատեան դաշտ:

Ռազմաքաղաքական անբարենպաստ պայմաններում ունեցած անյաջողութիւնների մեղքը հայութեան երկու հատուածների առանձին գործիչներ փորձեցին փնտռել միմեանց գործունէութեան մէջ: 1918-ին մայիսեան հերոսամարտերի օրերին արեւելահայ-արեւմտահայ վիհը կարծես վերացաւ՝ տեղի տալով թշնամու դէմ պայքարի յաջողութիւնները կիսելու մարտավարութեանը: Բայց նորահռչակ Հայաստանի Հանրապետութեան եւ Օսմանեան կայսրութեան միջեւ յունիսի 4-ին կնքուած Պաթումի պայմանագիրը, որով հայկական կողմը յօգուտ թուրքերի ստիպուած էր հրաժարուել ոչ միայն Արեւմտեան Հայաստանից ու Կարսի մարզից, այլեւ Արեւելեան Հայաստանի զգալի մասից, կրքերը ծայր աստիճան բորբոքեց:

Պայմանագրում տեղ գտած 5-րդ յօդուածը, որով «Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը պարտաւորւում էր գործուն կերպով ... գինաթափել ու ցրել բոլոր հրոսակախումբերը, որոնք կը փորձեն թաքնուել այնտեղ»[1], ուղղակիօրէն նկատի առնելով Անդրանիկի եւ այլ ջոկատների գործունէութիւնը, արեւմտահայ կամաւորականների շրջանում բուռն դժգոհութիւն առաջացրեց: Ի զուր չէ, որ զօրավար Անդրանիկը, ստանալով այդ պայմանագրի լուրը, զօր. Թովմաս Նազարբէկեանին գրած նամակում յայտնում էր իր զայրոյթը. «Վեց հարիւր տարուան ստրկութեան շղթան դարձեալ ձեր վիզն ու ոտքը կ'անցնէք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմաններուն հանդուրժել՝ մոռնալով մեր երեսուն տարուան զոհերը եւ մէկ միլիոն նահատակները»[2]:

Սակայն, խօսելով արեւմտահայութեան հասկանալի դժգոհութեան մասին, միաժամանակ չպիտի մոռանալ, որ 1918 յունիսին Հայաստանի նորահռչակ հանրապետութիւնը ռազմաքաղաքական ծանր պայմաններում ոչ միայն չէր կարող պաշտպանել արեւմտահայութեան, այլեւ արեւելահայութեան շահերը, ուստի այնքան էլ արդարացի չէ նրան մեղադրել համազգային խնդիրներից, մասնաւորապէս արեւմտահայ դատից հրաժարուելու մէջ: Ինչեւէ, փաստը մնում է փաստ, որ հանրապետութեան գոյութեան առաջին տարում արեւելահայ-արեւմտահայ յարաբերութիւնները մնացին բաւական լարուած:

1918 հոկտեմբերի 30-ին համաշխարհային պատերազմում յաղթանակած Անտանտի երկրների եւ պարտուած Օսմանեան կայսրութեան միջեւ Մուտրոսում կնքուած զինադադարը հայկական հարցի լուծման մեծ յոյսեր ներշնչեց: Թուրքական կառավարութիւնը պարտաւորւում էր զօրքերը հետ քաշել մինչեւ 1914-ի նախապատերազմեան սահմանները: Շուտով ստացուեց նաեւ Փարիզում սկսուելիք խաղաղութեան վեհաժողովի լուրը, որն էլ աւելի ոգեւորեց համայն հայութեանը:

Վեհաժողովին հայ ժողովրդի շահերը ներկայացնելու համար կազմուեց հայկական երկու պատուիրակութիւն: Մէկը ներկայացնում էր Հայաստանի Հանրապետութիւնը՝ Ա. Ահարոնեան (նախագահ), Մ. Պապաճանեան եւ Հ. Օհանջանեան կազմով, միւսը՝ եգիպտահայ մեծահարուստ, նշանաւոր հասարակական գործիչ Պօղոս Նուպարի գլխաւորած «Ազգային պատուիրակութիւնը» (անդամներ՝ Ա. Չօպանեան, Վ. Թէքէեան), հանդէս էր գալիս աշխարհով մէկ սփռուած արեւմտահայութեան անունից: Ի սկզբանէ երկու պատուիրակութիւնների միջեւ ի յայտ եկան լուրջ տարաձայնութիւններ: «Ազգային պատուիրակութիւնը» համարում էր, որ Ա. Ահարոնեանի պատուիրակութիւնը լաւագոյն դէպքում ներկայացնում է միայն Արարատեան (կամ՝ Երեւանեան) հանրապետութիւնը, ուստի իրաւունք չունի վեհաժողովում հանդէս գալու Հայաստանի անունից: Ընդ որում, Պօղոս Նուպարի պատուիրակութիւնը «Հայաստան» ասելով նկատի ուներ Արեւմտեան Հայաստանը, որին յետոյ պիտի միանար Արեւելեան Հայաստանը: Ա. Ահարոնեանն ընդհակառակը՝ հայկական հարցի լուծումը տեսնում էր արդէն պետականութիւն համարուող Հայաստանի Հանրապետութեանը ազատագրուելիք Արեւմտահայաստանը միացնելու եղանակով[3]: Ի վերջոյ, երկու պատուիրակութիւնները կարողացան միաւորել իրենց ծրագրերը եւ հանդէս գալ միասնական պահանջներով: Հայկական հարցի լուծման խնդրում դաշնակից երկրների խոստումները, միացեալ Հայաստանի ազգային երազանքի իրականացման մօտալուտ զգացողութիւնն արագօրէն սկսեցին մերձեցնել հայութեան երկու հատուածներին:

Համերաշխութեան եւ միասնականութեան ձգտումը նկատուեց նաեւ Հայաստանի Հանրապետութեան հասարակական-քաղաքական շրջանակներում: Պատահական չէ, որ ապագայ միացեալ հայրենիքի ստեղծման մտահոգութեամբ 1919-ի փետրուարի 6-13-ը Երեւանում գումարուած Արեւմտահայերի երկրորդ համագումարը ստացաւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան բազմակողմանի օժանդակութիւնը[4]: Բազմաթիւ կենսական հարցերի վերաբերեալ ընդունած որոշումների մէջ համագումարը կարեւորեց «Արարատեան Հանրապետութեան նախարարութեան (կառավարութեան - Ա.Մ.) եւ խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու» անհրաժեշտութիւնը[5]: Այսպէս՝ 1919-ի փետրուար-մարտից ընդհանուր խանդավառութեան մթնոլորտում ներազգային միասնութեան գաղափարն օրէցօր ամրապնդուեց, առաւել եւս, որ Փարիզից ստացւում էին նորանոր ոգեւորիչ լուրեր՝ հայկական հարցը Հայաստանի երկու հատուածների միացման ճանապարհով լուծելու՝ Անտանտի երկրների ղեկավարների պատրաստակամութեան մասին[6]:

Նման պայմաններում տրամաբանօրէն դէպքերը տարան դէպի Միացեալ Հայաստանի աքթի ընդունմանը: 1919-ին ապրիլի 27-ին

Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանը կառավարութեանը տուեց լիազօրութիւններ՝ հռչակելու Միացեալ Հայաստանի անկախութիւնը: Ուղիղ մէկ ամիս անց՝ մայիսի 27-ին Հայաստանի Հանրապետութեան նախարարաց խորհուրդը (կառավարութիւնը) միացեալ Հայաստանի հռչակման նպատակով օրէնք ընդունեց Հայաստանի խորհրդի (խորհրդարան) կազմը Արեւմտահայ գործադիր մարմնի 12 ներկայացուցիչներով համալրելու մասին[7]: Մէկ օր անց՝ մայիսի 28-ին, այսինքն՝ անկախութեան հռչակման տարեդարձի օրը, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը հանդէս եկաւ վարչապետ Ալեքսանտր Խատիսեանի կազմած «Միացեալ Հայաստանի անկախութեան» հռչակագրով: Այս կարեւորագոյն պատմաքաղաքական փաստաթղթում մասնաւորապէս ասուած էր. «Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի եւ ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժանբաժան մասերը մշտնջենապէս միացած են իրբեւ անկախ պետական միութիւն»[8]:

Այնուհետեւ ընդգծում էր բովանդակ հայութեան դարաւոր իղձերի իրականացման արտայայտութիւն այս հռչակագրի վաւերականութիւնը. մի կողմից՝ ճիշդ մէկ տարի առաջ Արեւելահայ ազգային խորհուրդն իրեն հռչակել էր հայկական բոլոր գաւառների (իրականում՝ արեւելահայ գաւառների - Ա.Մ.) միակ եւ բարձրագոյն իշխանութիւն եւ միւս կողմից՝ 1919-ի փետրուարին կայացած Արեւմտահայերի երկրորդ համագումարը յայտարարել էր, որ ճանաչում է «Հայաստանը Միացեալ եւ անկախ»[9]: Ընդ որում, մատնանշւում էր, որ Հայաստանը Միացեալ հռչակելու լիազօրութիւնը կառավարութիւնը ստացել է խորհրդարանից:

Հռչակագրում յիշատակւում էր նաեւ. «Անդրկովկասում եւ Օսմանեան կայսրութեան սահմաններում գտնուած պապենական հայկական երկրների միացման եւ անկախութեան այս աքթը կատարելով՝ Հայաստանի կառավարութիւնը յայտարարում է, որ Միացեալ Հայաստանի պետական ձեւն է Ռամկավար հանրապետութիւնը»: Նշանակում է՝ կարեւորւում էր միասնական պետութեան ազատական-ժողովրդավարական կառուցուածքն ու բնոյթը:

Միացեալ Հայաստանի հռչակագրում մի անգամ եւս ընդգծւում էր այն հանգամանքը, որ հայ ժողովուրդն այսուհետեւ իր ամբողջական հայրենիքի լիակատար տէրն է, իսկ Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանն ու կառավարութիւնը այդ պետութեան ընդհանուր օրէնդսիր ու գործադիր մարմինները[10]:

Հռչակագրի ընթերցումից յետոյ, նախապէս ձեռք բերուած պայմանաւորուածութեան համաձայն, Արեւմտահայ գործադիր մարմնի 12 անդամներ՝ որպէս լիարժէք անդամներ, խորհրդարանում զբաղեցրին իրենց համար յատկացուած տեղերը՝ արժանանալով ծափողջոյնների: Ապա եղան ողջոյնի ելոյթներ: Իր տպաւորիչ ճառում Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ 5-րդը, արտասահմանեան հիւրերի ու դիւանագէտների ներկայութեամբ, մեր ժողովրդին մասնաւորապէս կոչ յղեց «յոյս չդնել օտարի վրայ, ...: Այժմ, երբ Մասիսը մագնիսի պէս քաշեց ու միացրեց հայութեան երկու հատուածները, երբ ստեղծուեց Միացեալ Հայաստան, այժմ պէտք է լարենք մեր ազգային բոլոր կարողութիւնները՝ փրկելու եւ դաստիարակելու համար մեր ժողովուրդը ի փառս իր ազատ հայրենիքի»[11]:

Խօսելով 1918 եւ 1919-ի հռչակագրերի պատմական նշանակութեան մասին՝ հետագայում Ա. Խատիսեանը գրում էր. «Հայ ազգային գիտակցութիւնն էր, որ արիւնի եւ արցունքի գետեր անցնելով, կու գար այդ աքթերով դարբնելու հայ ժողովրդի ազատութեան, անկախութեան եւ միութեան կռուանները»[12]:

Միացեալ Հայաստանի հռչակումը ցնծութեամբ ընդունուեց համայն հայութեան կողմից: Այդ օրը Երեւանում եղան մեծ տօնախմբութիւններ: Փողոցներում ծածանւում էին Եռագոյն դրօշները, հնչում էին երգն ու երաժշտութիւնը, մարդիկ իրաւական այդ փաստաթղթի ընդունումն իրաւամբ ընկալում էին իրենց դարաւոր երազանքների իրականացման ճանապարհին կատարուած մեծագոյն քայլ:

*Ալետիս Ահարոնեան*

*Վուտրօ Ուիլսըն*

Պատահական չէ, որ Միացեալ Հայաստանի հռչակագրի ընդունումից յետոյ Ա. Ահարոնեանի պատուիրակութիւնը Փարիզում սկսեց աւելի համարձակ գործել եւ նրա առաջադրած պայմաններն սկսեցին հնչել համայն հայութեան անունից: Շուտով այդ գործունէութիւնը տուեց իր առաջին պտուղները. 1920-ի ապրիլին Սան Ռեմոյում դաշնակից երկրների ղեկավարները յայտնեցին իրենց կարծիքը՝ Հայկական հարցը Հայաստանի երկու հատուածների միաւորման ճանապարհով լուծելու վերաբերեալ: 1920 օգոստոսի 10-ին Փարիզի արուարձան Սեւր քաղաքում, համաշխարհային պատերազմում յաղթանակած Անտանտի երկրների եւ պարտուած Թուրքիայի միջեւ կնքուած դաշնագրով, որի տակ Հայաստանի կողմից նախապէս պատուիրուած ոսկէ գրչով ստորագրեց Ա. Ահարոնեանը, Միացեալ Հայաստանը ստեղծուելու էր Հայաստանի Հանրապետութեանը արեւմտահայ չորս նահանգների (Տրապիզոն, Էրզրում, Պիթլիս եւ Վան) մեծ մասի միաւորման ուղիով: Ի կատարումն նոյն դաշնագրի 89-րդ յօդուածի՝ նոյեմբերի 22-ին Միացեալ Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլսընը ներկայացրեց իր իրաւարար վճիռը հայ-թուրքական սահմանի վերաբերեալ, որով Հայաստանի Հանրապետութեան տարածքը կազմելու էր մօտաւորապէս 160 հազ. քառ. քմ՝ արտաքին ելքով դէպի Սեւ ծով:

Անկախ այն բանից, որ աշխարհաքաղաքական աննպաստ զարգացումների, մասնաւորապէս քեմալապոլշեւիկեան գործակցութեան հետեւանքով հայ ժողովրդի արդարացի պահանջները չիրագործուեցին, իսկ Հայաստանի Հանրապետութիւնը կործանուեց, Միացեալ Հայաստանի տեսլականը, որպէս ազգի միասնութեան, երկու հատուածների կամրջման անխախտ գաղափար, հայ ժողովրդին ուղղորդեց դէպի 21-րդ դար: Այդ գաղափարը, առաջին հերթին որպէս Հայոց ցեղասպանութեան հետեւանքների վերացման առաջին նախապայման, այսօր էլ շարունակում է մնալ հայութեան հաւաքական գիտակցութեան անկիւնաքարը եւ կազմում է Հայաստան-սփիւռք իրական գործակցութեան գերագոյն նպատակը:

**ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ**


1. Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828-1923), Ջ. Ս. Կիրակոսեանի խմբագրութեամբ, Է., 1972, էջ 534:
2. Զօրավար Անդրանիկը կը խօսի, էջ 26-27:
3. Հայկական ազգային պատուիրակութեան ներկայացրած պահանջների մասին տե՛ս «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ. (քաղաքական պատմութիւն), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Է., 2000, էջ 89-91, 100-101:
4. Նոյն տեղում, էջ 91:
5. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Է., 1993, էջ 272:
6. Փարիզի վեհաժողովում հայկական հարցի քննարկումների մասին տե՛ս Յովհաննիսեան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետութիւն,, հ. 1, (1918-1919), Է., 2005, էջ 273-372:
7. «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ.», էջ 105:
8. Հայաստանի ազգային արխիւ, ֆ. 198, ց.1, գ. 4, թ. 1, Տե՛ս նաեւ Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 152-153:
9. Նոյն տեղում:
10. Նոյն տեղում:
11. Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 280:
12. Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 153-154:

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՆՔԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակման առաջին իսկ պահից հայկական հարցը ներառուեց հայկական պետութեան արտաքին քաղաքական օրակարգում: Նորանկախ Հայաստանին վիճակուած էր ստանձնելու Արեւմտեան Հայաստանում եւ Օսմանեան կայսրութեան այլ հայաբնակ վայրերում հայ բնակչութեան գրեթէ ամբողջութեամբ բնաջնջելու թուրքական իշխանութիւնների յանցաւոր քաղաքականութեան հետեւանքների ծանր բեռը: Իրավիճակն աւելի էր բարդանում նրանով, որ օգտուելով ռուս-թուրքական ռազմաճակատից ռուսական բանակի հեռացումից, թուրքական զօրքերը շարժւում էին դէպի Արեւելեան Հայաստան՝ ձգտելով շարունակել իրենց հայաջինջ քաղաքականութիւնը եւ վերջնականապէս վերացնել փանթուրանական ծրագրերի իրագործման ճանապարհին կանգնած հայկական «սեպը»:

Թուրքական արշաւանքի հետեւանքով 1918 յունիսի 4-ին նորանկախ Հայաստանի Հանրապետութեանը պարտադրուեց Պաթումի պայմանագիրը, որով Հայաստանին 11 հազար քառ. քմ. տարածք թողնելու գնով թուրքերը ճանաչում էին վերջինիս ինքնիշխանութիւնը: Պրեսթ Լիթովսկի պայմանագրով թուրքական կողմին արուած տարածքային զիջումներից բացի, այս պայմանագրով թուրքերը Հայաստանին պարտադրում էին իրենց գիջել եւս 25 հազար քառ քմ. տարածք: Պաթումի պայմանագրի 2-րդ յօդուածով Օսմանեան կայսրութեանն էր անցնում Արեւելեան Հայաստանի զգալի մասը՝ Շարուր-Դարալագեազը, Նախիջեւանը, Սուրմալուն, Կարսը, Կաղզուանը, Սարիղամիշը, Ախալքալաքը, Լոռին: Հայաստանի Հանրապետութիւնը բաղկացած էր լինելու միայն Նոր Պայազիտի, Երեւանի, Էջմիածնի գաւառների, Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի գաւառների մի մասից[1]: Փաստօրէն վերանայւում էին Խորհրդային Ռուսաստանի հետ Քառեակ դաշինքի երկրների կնքած Պրեսթ Լիթովսկի պայմանագրի դրոյթները, սակայն թուրքական կողմի պահանջով Պաթումի պայմանագրի 12-րդ յօդուածով Պրեսթ Լիթովսկի պայմանագրի դրոյթները կողմերի համար ուժի մէջ էին համարւում այնքանով, որքանով չէին հակասում նոր պայմանագրին[2]: Այսպէս, Պաթումի պայմանագրի 5-րդ յօդուածը բառացի կրկնում էր Պրեսթ Լիթովսկի հաշտութեան պայմանագրին յարակից կնքուած ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի առաջին յօդուածի 5-րդ կէտը, որի համաձայն հակաթուրքական գինուած կազմաւորումները՝ հայ կամաւորական ջոկատները, պէտք է անյապաղ զինաթափուէին եւ լուծարուէին: Բացի այդ, 11-րդ յօդուածով Հայաստանի կառավարութիւնը պարտաւորւում էր նաեւ ջանքեր գործադրել, որպէսզի Պաքուից անյապաղ հեռացուէին այնտեղ գտնուող բոլոր հայկական զինուած ուժերը[3]: Այս յօդուածները ակնյայտօրէն վկայում էին ցեղասպանութեան քաղաքականութիւնը շարունակելու եւ փանթուրանական ծրագրերը կեանքի կոչելու թուրքական իշխանութիւնների մտադրութիւնների մասին:

Պայմանագրի 6-րդ յօդուածով թուրքական կողմը Հայաստանի Հանրապետութեանը միակողմանիօրէն պարտաւորեցնում էր յարգել իր տարածքում բնակուող մահմետականների կրօնական, քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքները: Փոխարէնը թուրքական իշխանութիւնները Օսմանեան կայսրութեան եւ յատկապէս Արեւմտեան Հայաստանում զանգուածային սպանութիւններից հրաշքով փրկուած եւ դեռեւս այնտեղ մնացած հայութեան ոչ միայն դաւանաբանական, այլեւ տարրական՝ կեանքի ապահովութեան իրաւունքը յարգելու որեւէ պարտաւորութիւն չէին ստանձնում: Այս դրոյթների լոյսի ներքոյ բաւական արտառոց է պայմանագրի 10-րդ յօդուածի բովանդակութիւնը, որի համաձայն պայմանաւորուող կողմերից մէկի տարածքի բնակիչները կամ համայնքները, որոնք սահմանի միւս կողմում գտնուող անշարժ գոյքի նկատմամբ սեփականութեան կամ դրա օգտագործման իրաւունք ունեն, կարող էին օգտագործել, շահագործել, անձամբ կամ վստահուած անձանց միջոցով վարձակալութեան տալ կամ վաճառել դրանք[4]: Ակնյայտ է, որ տուեալ յօդուածում ամրագրուած իրաւունքներից գործնականում օգտուելու էին միայն Հայաստանի տարածքում գոյք ունեցող մահմետականները, իսկ զանգուածային բնաջնջումից հրաշքով փրկուած օսմանահոգեպատակ հայերը, անվտանգութեան որեւէ երաշխիք չունենալով, հազիւ թէ համաձայնուէին իրենց կեանքը կրկին վտանգի ենթարկել, վերադառնալ հայրենիք եւ փորձել պայքարել արդէն բռնազաւթուած գոյքը վերադարձնելու համար:

Պրեսթ Լիթովսկի հաշտութեան պայմանագիրի ստորագրութիւն

Ամփոփելով Պաթումի պայմանագրի բովանդակութեան քննութիւնը, կարող ենք արձանագրել, որ թուրքական կողմը նորանկախ Հայաստանին պարտադրել էր մի փաստաթուղթ, որով, ըստ էութեան, «վաւերացուում» էին թուրքական իշխանութիւնների ցեղասպան քաղաքականութեան հետեւանքները: Այդուհանդերձ, պէտք է արձանագրել, որ Պաթումի պայմանագրով անկախ Հայաստանի ճանաչումը ոչ թէ հայ ժողովրդին թուրքերի շնորհ, այլ նրանց կողմից հարկադրուած քայլ էր: Ակնյայտ է, որ եթէ այդ հարցի լուծումը կախուած լիներ միայն թուրքերից, ապա անկախ Հայաստան երբեք չէր ստեղծուի: Հայաստանի անկախութիւնը թուրքերը ստիպուած եղան ճանաչել նախ Մայիսեան հերոսամարտերի արդիւնքում հայ ժողովուրդի ցուցաբերած յաղթական ոգու եւ անկախութեան հասնելու ձգտման հետ հաշուի նստելով: Միեւնոյն ժամանակ, միջազգային հանրութիւնն արդէն դատապարտում էր թուրքական իշխանութիւններին հայ ժողովրդի նկատմամբ իրագործուող ցեղասպանութեան համար, եւ այս քայլով Թուրքիան փորձում էր քաղաքակիրթ պետութեան տպաւորութիւն ստեղծել ու մեղմել իր նկատմամբ եղած միջազգային ճնշումը: Այսպիսով, թուրքական կողմը ստիպուած էր համակերպուել իր համար որեւէ սպառնալիք չներկայացնող չնչին տարածք եւ թոյլ տնտեսութիւն ունեցող Հայաստանի իր կարծիքով ժամանակաւոր գոյութեան հետ:

Պէտք է նշել, որ Պաթումի պայմանագիրը կնքուեց ակնյայտ ուժի ազդեցութեան պայմաններում եւ ինքնորոշման սկզբունքի խախտումով: Օսմանեան կայսրութիւնը նորանկախ Հայաստանին իր կամքը պարտադրելով կոպտօրէն խախտում էր միջազգային իրաւունքում վաղուց գործողութեան մէջ մտած Հաագայի 1907 հոկտեմբերի 18-ի «Միջազգային հակամարտութիւնները խաղաղ կարգաւորելու մասին» եւ «Պայմանագրային պարտաւորութիւնների կատարման հարցում ուժի կիրառման սահմանափակման մասին» ուխտերը: Այդ միջազգային փաստաթղթերով սահմանուել էր, որ պետութիւն-

ների անվտանգութեան ու ժողովուրդների բարեկեցութեան հիմքում պէտք է դրուեն իրաւունքի ու արդարութեան սկզբունքները, իսկ պետութիւնները չպէտք է դիմեն ռազմական ուժի այլ պետութիւնների նկատմամբ պայմանագրային պարտաւորութիւնները կատարել տալու նպատակով[5]:

Անօրինական լինելուց բացի Պաթումի պայմանագիրը նաեւ չի մտել իրաւական ուժի մէջ: Փաստաթղթի 14-րդ յօդուածի համաձայն, պայմանագիրը պէտք է վաւերացուէր եւ վաւերացուած օրինակները պէտք է փոխանակուէին Կ. Պոլսում մէկ ամսուան ընթացքում կամ աւելի կարճ ժամանակամիջոցում, ինչից յետոյ այն պէտք է դրուէր գործողութեան մէջ[6]: Սակայն պայմանագիրը չի վաւերացուել ստորագրող պետութիւնների կողմից, ուստի չի մտել օրինական ուժի մէջ:

1918-ին համաշխարհային պատերազմը մտաւ իր աւարտական փուլը: Աստիճանաբար պարզ էր դառնում, որ մօտ է Անտանտի դաշնակից երկրների յաղթանակը Պալքանեան, Միջագետքի եւ Սիրիա-պաղեստինեան ճակատներում եւ ակնյայտ՝ Քառեակ միութեան երկրների պարտութիւնը: 1918-ի վերջին Օսմանեան կայսրութիւնը ստիպուած եղաւ հաշտութիւն խնդրել դաշնակից պետութիւններից: Նախաձեռնութիւնն իր ձեռքը վերցրած Մեծն Բրիտանիայի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ զինադադարը ստորագրուեց 1918 հոկտեմբերի 30-ին, Լեմնոս կղզու Մուտրոս նաւահանգստում՝ անգլիական «Ագամեմնոն» յածանաւի վրայ:

Զինադադարի պայմանագրի որոշ դրոյթներ ուղղակիօրէն եւ անուղղակիօրէն առնչըւում էին հայութեան իրաւունքների պաշտպանութեան հարցերին: Զինադադարի 4-րդ յօդուածում դաշնակիցների բոլոր ռազմագերիների ազատ արձակումից զատ, յատուկ նշւում էր, որ բոլոր հայ գերիներն ու բանտարկեալները նոյնպէս պէտք է հաւաքուէին Կ. Պոլսում եւ առանց որեւէ պայմանների յանձնուեն դաշնակիցներին[7]:

Փաստաթղթի 11-րդ յօդուածի համաձայն թուրքական զօրքերը պէտք է դուրս բերուէին Անդրկովկասից, ընդ որում, մնացած զօրքերը նոյնպէս պէտք է հեռացուէին, եթէ տեղերում իրադրութիւնն ուսումնասիրելուց յետոյ դաշնակիցները ներկայացնէին նման պահանջ: Ելնելով այս յօդուածի պահանջից, 1918-ի դեկտեմբերի սկզբին թուրքական զօրքերը հեռացան Անդրկովկասից՝ բացառութեամբ Կարսի շրջանից, որը նրանք ազատեցին միայն 1919-ի ապրիլին[8]:

Զինադադարի 16-րդ յօդուածով պահանջըւում էր թուրքական զօրքերի դուրսբերումը Կիլիկիայից, իսկ 24-րդ յօդուածում շեշտւում էր, որ հայկական վիլայեթներից մէկում անկարգութիւններ ծագելու դէպքում դաշնակիցներն իրենց իրաւունք էին վերապահում գրաւելու դրանց մի մասը: Կարծես թէ այս յօդուածը յաղթանակած տէրութիւններին իրաւական հիմք էր ապահովում ցեղասպանութեան ենթարկուող արեւմտահայերի իրաւունքների պաշտպանութեան համար, սակայն նոյն փաստաթղթի 5-րդ յօդուածով հայկական տարածքներում «կարգուկանոն պահպանելու» պատրուակով դրանք թողնըւում էին թուրքական չզօրացրուած զօրքերի վերահսկողութեան տակ, իսկ այդ նահանգների վերջնական ճակատագիրի հարցը թողնւում էր խաղաղութեան վեհաժողովին[9]: Արեւմտեան Հայաստանում կարգուկանոնի հաստատումը յաղթողները փաստօրէն վստահում էին պատերազմում պարտուած օսմանեան բանակին, որն աշխուժ մասնակցութիւն էր ունեցել հայերի զանգուածային բնաջնջման գործում: Զինադադարի 5-րդ յօդուածի դրոյթներով ուղղակի իմաստազրկւում էր 24-րդ յօդուածը՝ չեզոքացնելով Արեւմըտեան Հայաստանի տարածքներում դեռեւս ողջ մնացած հայութեան չնչին մնացորդներին պաշտպանելու յաղթանակած տէրութիւնների պարտաւորութիւնը: Այսպիսով՝ 24-րդ յօդուածը ստանում էր ձեւական, խորհրդանշական բնոյթ եւ ծառայում էր որպէս այդ տարածքներում հայերի զանգուածային սպանութիւնների կատարման համար թուրքերի պատասխանատուութեան մասին լոկ որպէս յիշեցում: Եթէ Անտանտի տէրութիւնները Հայոց ցեղասպանութեան ընթացքում իրենց անգործութիւնը կարող էին ինչ որ ձեւով արդարացնել նրանով, որ անկարող էին միջամըտել եւ կանխել հայերի զանգուածային կոտորածները, քանզի զրկուած էին իրենց կամքը թելադրելու հնարաւորութիւնից մի երկրի, որի դէմ պատերազմի մէջ էին, ապա պատերազմի յաղթական աւարտից յետոյ, երբ արդէն իրենք էին դրութեան տէրը, նրանց անտարբերութիւնը արեւմտահայութեան օրինական իրաւունքների պաշտպանութեան հարցում այլեւս ոչ մի արդարացում չէր կարող ունենալ:





Այդուհանդերձ, Մուտրոսի զինադադարի ստորագրումը կարեւոր էր նրանով, որ Օսմանեան կայսրութիւնը ճանաչում իր պարտութիւնը Առաջին աշխարհամարտում եւ դրանով չեղարկւում էին Հայաստանի ու հայ ժողովրդի իրաւունքները ոտնահարող Պրեսթ Լիթովսկի եւ Պաթումի պայմանագրերը: Զինադադարի ստորագրումով վերականգնուեց 1914-ի սահմանը եւ Հայաստանի Հանրապետութեան տարածքը կազմեց 55 հազար քառ. քմ.[10]:

1919 մայիսի 28-ին Ա. Խատիսեանի կառավարութեան կողմից ընդունուած Միացեալ Հայաստանի մասին հռչակագրի ոգուց ելնելով Հայաստանի Հանրապետութեան պատւիրակութեան ղեկավար Ա. Ահարոնեանը ստորագրեց Սեւրի պայմանագիրը, որով Անտանտի յաղթանակած տէրութիւնների շարքում Հայաստանը հաշտութեան պայմանագիր կնքեց Առաջին աշխարհամարտում իրեն պարտուած ճանաչած Օսմանեան կայսրութեան հետ: Պայմանագրի շուրջ ընթացել են երկարատեւ բանակցութիւններ եւ վերջապէս 1920 յուլիսի 22-ին Կ. Պոլսում սուլթանի խորհուրդը լրիւ կազմով քուէարկեց խաղաղութեան պայմանագիրը ստորագրելու օգտին եւ օգոստոսի 10-ին թուրքական պատւիրակութիւնը ստորագրեց Սեւրի պայմանագիրը[11]: Թէեւ կայսրութեան տարածքի մեծ մասը վերահսկւում էր քեմալականների կողմից, այդուհանդերձ, թուրքական կողմից պայմանագիրը ստորագրուեց միջազգային հանրութեան կողմից ճանաչուած սուլթանի օրինական իշխանութիւնը ներկայացնող պատւիրակութեան կողմից:

Ինչպէս յայտնի է, Սեւրի պայմանագրում Հայաստանին ուղղակիօրէն վերաբերում էին 88-93-րդ յօդուածները, սակայն դրանցից բացի այդ փաստաթղթում կան նաեւ Հայաստանին ու հայ ժողովրդին անուղղակիօրէն վերաբերող, սակայն ոչ պակաս կարեւոր յօդուածներ: Պայմանագրի 88-րդ յօդուածով Թուրքիան Հայաստանը ճանաչում էր որպէս ազատ ու անկախ պետութիւն, իսկ 89-րդ յօդուածով Թուրքիան, Հայաստանը, ինչպէս նաեւ պայմանագիրը ստորագրող միւս պետութիւնները համաձայնւում էին, որ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Պիթլիսի նահանգներում երկու պետութիւնների սահմանազատումը, ինչպէս նաեւ Հայաստանի դէպի Սեւ ծով ելք ունենալու հարցի լուծումը թողնուի Միացեալ Նահանգներու որոշմանը[12]:

Պայմանագրի 89-րդ յօդուածի այս ձեւակերպումները որոշ հետազօտողների հիմք են տուել եզրակացնելու, թէ հայ-թուրքական սահմանի վերաբերեալ 1920 նոյեմբերի 22-ին Միացեալ Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլսընի կայացրած իրաւարար վճիռը չվաւերացուած եւ ուժի մէջ չմտած Սեւրի պայմանագրի 89-րդ յօդուածից բխող փաստաթուղթ է, ուստի այն եւս իրաւական ուժ չունի: Պէտք է նշել սակայն, որ հայ-թուրքական սահմանի գծման հարցում Միացեալ Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլսընին իրաւարարի դերը ստանձնելու առաջարկը դաշնակիցների Գերագոյն խորհրդի կողմից արուել էր դեռ 1920 ապրիլի 25-ին, իսկ մայիսի 17-ին նա որպէս իրաւարար գործելու համաձայնութիւն էր տուել[13]: Այսինքն՝ իրաւարարութիւնը սկսուել էր դեռ մինչեւ Սեւրի պայմանագրի կնքումը, հետեւաբար դա միանգամայն ինքնուրոյն միջազգային-իրաւական գործընթաց էր Մեծն Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Ճափոնիայի, իբրեւ դաշնակից տէրութիւնների Գերագոյն խորհրդի անդամների, մի կողմից եւ Վուտրօ Ուիլսընի, իբրեւ Միացեալ Նահանգներու նախագահի, միւս կողմից[14]: Բովանդակային առումով Ուիլսընի իրաւարար վճիռը կապ ունի Սեւրի պայմանագրի հետ այնքանով, որքանով, որ վերջինս 89-րդ յօդուածով Միացեալ Նահանգներու նախագահին իրաւարարի դեր ստանձնելու խնդրանքով նախկինում դիմած Դաշնակից ուժերի Գերագոյն խորհրդի չորս տէրութիւններին՝ Մեծն Բրիտանիային, Ֆրանսիային, Իտալիային եւ Ճափոնիային, որոնք Սեւրի պայմանագրում նշուած են իբրեւ գլխաւոր դաշնակից տէրութիւններ, միացել էին եւս տասը երկրներ, այդ թւում վե-

ճի կողմ հանդիսացող՝ Հայաստանը եւ Թուրքիան[15]: Այսպիսով, Սեւրի պայմանագիրը ի յաւելումն դրանից առաջ Միացեալ Նահանգներու նախագահին ուղղուած առաջարկին եւ նրանից ստացուած համաձայնութեանը, լրացուցիչ իրաւական հիմք էր իրաւարարութեան համար, որն անկախ դրանից արդէն ընթացքի մէջ էր: Աւելին, հենց Սեւրի պայմանագրի 89-րդ յօդուածի համաձայն անդամ պետութիւններն իրաւարար վճռի ընդունումը չեն պայմանաւորել որեւէ հանգամանքով, այլ պարտաւորուել են վճիռն ընդունել անմիջապէս, իսկ վէճի կողմ հանդիսացող Թուրքիան 90-րդ յօդուածով լրացուցիչ կերպով վերահաստատել է այս դիրքորոշումը, հրաժարելով Հայաստանին փոխանցուելիք տարածքների նկատմամբ իր իրաւունքներից[16]:

Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի յստակեցման վերաբերեալ 1920 նոյեմբերի 22-ին Միացեալ Նահանգներու նախագահ Ուիլսընի կայացրած իրաւարար վճռով նախկինում Օսմանեան կայսրութեան տարածք համարուող Վանի, Պիթլիսի, էրզրումի նահանգների մեծ մասը եւ Տրապիզոնի նահանգի մէկ երրորդը փոխանցւում էր Հայաստանին, ապահովելով վերջինիս ելքը դեպի Սեւ ծով: Իրաւարար վճռով Հայաստանին փոխանցուելիք տարածքը կազմելու էր շուրջ 103.599 քառ. քմ., այսինքն՝ Արեւմտեան Հայաստանի շուրջ 40 առ հարիւրը: Ուիլսընի իրաւարար վճիռով, որը կայացուեց այդ պահին գործող միջազգային իրաւունքի նորմերին համապատասխան, ըստ էութեան, քաղաքական պատասխանատուութեան իրատեսակ մի դրսեւորում էր հայերի ցեղասպանութիւնն իրագործած Օսմանեան կայսրութեան նկատմամբ, քանզի թուրքական իշխանութիւնները զրկւում էին Օսմանեան կայսրութեան նշուած տարածքների նկատմամբ իրենց գերիշխանութիւնից: Իրաւարար վճռի տրամաբանութեամբ միայն այդ տարածքի վրայ նախկին զոհի նկատմամբ թուրքերի իշխանութեան բացառումն ու իրենց պատմական հայրենիքի մի մասի նկատմամբ ցեղասպանութեան զոհ հանդիսացող հայերի իրաւունքների վերականգնումը կարող էր հիմք դառնալ նրանց վերադարձի ու բնականոն կենսագործունէութեան համար:

Սեւրի պայմանագրի 92-րդ յօդուածով Ազրպէյճանի եւ Վրաստանի հետ Հայաստանի սահմանները պէտք է որոշուէին շահագրգիռ պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ, իսկ եթէ նրանց չյաջողուէր համաձայնութեան գալ, ապա սահմանագծման հարցը լուծուելու էր Գլխաւոր դաշնակից պետութիւններու կողմից[17]:

Հայաստանի դէպի Սեւ ծով ելք ապահովելու դրոյթը յստակեցւում էր 352-րդ յօդուածով, որով Հայաստանին Տրապիզոնի նաւահանգստի վրայով Սեւ ծով ազատ մուտք ունենալու իրաւունք էր տրւում: Աւելին, Տրապիզոնի նաւահանգստում Հայաստանի առյաւէտ վարձակալութեան էր յանձնուելու մի տեղամաս, որի շահագործման պայմանները, ներառեալ վարձավճարի չափը, որոշուելու էր Հայաստանի, Թուրքիայի մէկական անդամներից եւ Ազգերի լիկայի կողմից նշանակուած ներկայացուցչից բաղկացած խառը յանձնաժողովի կողմից: Բացի այդ, 351-րդ յօդուածով Վրաստանի, Ազրպէյճանի եւ Պարսկաստանի հետ մէկտեղ Հայաստանին դէպի Սեւ ծով ազատ մուտքի իրաւունք էր տրւում նաեւ Պաթումի նաւահանգստից[18]:

Հայաստանին անմիջականօրէն վերաբերող յօդուածներից բացի Սեւրի պայմանագրում առկայ են պատերազմի ընթացքում Օսմանեան կայսրութեան տարածքում կատարուած յանցագործութիւնների համար թուրքական պետութեան նկատմամբ պատժամիջոցներ սահմանող 226-րդ, 228-րդ եւ 230-րդ յօդուածներ: Պայմանագրի 226-րդ յօդուածով Օսմանեան կառավարութիւնը ճանաչում էր դաշնակից պետութիւնների ազատութիւնը՝ դատական գործ յարուցելու իրենց ռազմական դատարանների առջեւ պատերազմական սովորոյթներին եւ օրէնքներին հակասող արարքներ գործած անձանց նկատմամբ[19]: Թուրքիայի կամ նրա դաշնակիցների դատական ատեանների բոլոր դատավարութիւններից կամ յարուցուած դատական գործերից անկախ յաղթանակած տէրութիւններն իրաւունք ունէին պատիժներ կիրառել մեղաւոր ճանաչուած անձանց նկատմամբ: Փաստօրէն դաշնակից տէրութիւններն իրենց իրաւունք էին վերապահում դատել պատերազմական յանցագործներին, անկախ այն հանգամանքից, թէ Թուրքիան իր ազգային դատարաններում կը դատի թէ ոչ այդ յանցագործներին: Օսմանեան կայսրութեան հետ հաշտութեան պայմանագրում նման յօդուածի ներառումը վկայում է այն մասին, որ Անտանտի տէրութիւնները թերահաւատօրէն էին վերաբերւում թուրքական արդարադատութեան համակարգին, միանգամայն իրաւացիօրէն կասկածելով, որ նման դատավարութիւնները մեղաւորներին պատժելու իրական նպատակ են հետապնդում: Այս յօդուածի տրամաբանութիւնը թերեւս բխում էր երիտթուրք պարագլուխների դատավարութեան ընթացքից, երբ հայերի զանգուածային սպանութիւնների կազմակերպման գլխաւոր կազմակերպիչներին թոյլ տրուեց խուսափել «թուրքական արդարադատութիւնից»:

*Սեւրի պայմանագիրի ստորագրութիւն*

Այնուհետեւ յօդուած 226-ում խօսւում էր պատերազմական յանցագործներին յանձնելու մասին. «Օսմանեան կառավարութիւնը պարտաւորւում է յանձնել դաշնակից տէրութիւններին, կամ նրանցից որեւէ մէկին, որը կը դիմի նրան այդ պահանջով, բոլոր այն անձանց, ովքեր կը մեղադրուեն պատերազմական սովորոյթներին եւ օրէնքներին հակասող որեւէ արարք գործելու մէջ, կը մատնանշուեն անուանաբար, թէ ըստ աստիճանի, կատարած պարտականութեան կամ զբաղեցրած պաշտօնի, որոնք շնորհուել են այդ անձանց օսմանեան իշխանութիւնների կողմից»[20]: Այս յօդուածի դրոյթները կատարելու գործում, սակայն, դաշնակից տէրութիւնները հետեւողական չգտնուեցին:

228-րդ յօդուածով Օսմանեան կառավարութիւնը պարտաւորւում էր մեղսագրուող փաստերին լրիւ ծանօթանալու նպատակով դատաքննութեանն ապահովել ցանկացած բնոյթի փաստաթղթերով եւ տեղեկութիւններով՝ մեղաւորներին որոնելու եւ պատասխանատուութիւնների չափը ճշգրիտ որոշելու համար[21]: Սեւրի պայմանագրի 226 եւ 228 յօդուածները բխում էին Հաագայի 1899-ին եւ 1907-ին խմբագրուած «ցամաքային պատերազմի օրէնքների եւ սովորոյթների մասին» ուխտերի դրոյթներից եւ կրկնում էին պատերազմական յանցագործներին պատժելու մասին Վերսայի, Սեն Ժերմենի, Տրիանոնի եւ Նեյի պայմանագրերում տեղ գտած յօդուածները:

Սեւրի պայմանագրի 230-րդ յօդուածով թուրքական կառավարութիւնը ոչ միայն ճանաչում էր պատերազմի օրէնքների եւ սովորոյթների դէմ կատարուած յանցագործութիւնների մէջ մեղադրուողների նկատմամբ քրէական պատասխանատուութեան կանչելու դաշնակից տէրութիւնների իրաւունքը, այլեւ պարտաւորւում էր նրանց յանձնել այն անձանց, ովքեր կասկածւում էին 1914 օգոստոսի 1-ից սկսած Օսմանեան կայսրութեան տարածքներում կոտորածներ իրականացնելու մէջ[22]: Ի տարբերութիւն 226 եւ 228 յօդուածների, 230 յօդուածը վերաբերում էր ոչ թէ պատերազմական յանցագործութիւններին, այլ պատերազմի ընթացքում թուրքական պետութեան տարածքներում բնակուող օսմանահպատակ ոչ թուրք բնակչութեան, առաջին հերթին՝ հայերի, զանգուածային բնաջնջման մէջ մեղադրուողներին պատասխանատուութեան կանչելուն: Այս յօդուածը պէտք է դիտարկել իբրեւ 1915 մայիսի 24-ի Անտանտի տէրութիւնների համատեղ հռչակագրի դրոյթների կենսագործման հետեւանք, երբ դաշնակիցները դեռ այն ժամանակ խոստացել էին պատասխանատուութեան կանչել հայերի զանգուածային սպանութիւնների մէջ մեղադրուողներին:

Սեւրի պայմանագրի 230-րդ յօդուածի ձեւակերպումները հնարաւորութիւն չէին ընձեռում թուրքական կողմին խուսափել Միջազգերի անապատներում հայերի զանգուածային կոտորածներում մեղադրուող անձանց յանձնելուց այն պատճառաբանութեամբ, թէ իբր չեն կարող նրանց յանձնել, քանի որ վերջիններս յանցագործութիւններ են կատարել թուրքական պետութեան սահմաններում արդէն չգտնուող տարածքներում: Նոյն յօդուածով դաշնակից տէրութիւններն իրենց իրաւունք էին վերապահում նշել այն դատարանը, որը պէտք է դատեր մեղադրուող անձանց, իսկ օսմանեան կառավարութիւնը պարտաւորւում էր ճանաչել այդ դատարանը: Ընդ որում, նշւում էր միջազգային յարաբերութիւնների պատմութեան մէջ առաջին անգամ յատուկ միջազգային քրէական դատարանի ստեղծման հնարաւորութեան մասին: Այն դէպքում, եթէ Ազգերի լիկան պահանջուող ժամանակ կը ստեղծէր նշուած գազանութիւնները դատապարտող իրաւասու դատարան, դաշնակից տէրութիւնները նշուած մեղադրեալներին կը փոխանցէին այդ դատարանին, իսկ թուրքական կառավարութիւնը պարտաւորւում էր ճանաչել այդ դատարանը[23]:

Օսմանեան կայսրութեան ոչ թուրք բնակչութեան, այդ թւում՝ հայերի, իրաւունքների պաշտպանութեան տեսակէտից չափազանց կարեւոր էին 125-րդ, 142-րդ եւ 144-րդ յօդուածները: Պայմանագրի 125-րդ յօդուածով Թուրքիայից անջատուած տարածքներում հաստատուած ոչ թուրք բնակչութեանը պայմանագիրն ուժի մէջ մտնելու պահից մէկ տարուան ընթացքում իրաւունք էր տրւում իր ազգային պատկանելութիւնը համապատասխան պետութեան քաղաքացիութիւն ընդունել[24]: Գործնականում այս յօդուածը հնարաւորութիւն էր ընձեռում Օսմանեան կայսրութիւնից անջատուող եւ Հայաստանի Հանրապետութեանը միացուելիք Արեւմտեան Հայաստանի տարածքներում դեռեւս մնացած կամ արաբական երկրներում հաստատուած օսմանահպատակ հայերին ընդունել Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն:

Փաստաթղթի 142-րդ յօդուածով էլ նախ ընդգծւում էր, որ 1914 նոյեմբերի 1-ից, այսինքն՝ Օսմանեան կայսրութեան Առաջին Աշխարհամարտի մէջ մտնելու պահից սկսած, այդ երկրում գոյութիւն ունեցած վարչակարգը եղել է ահաբեկչական: Այդ ամսաթուից յետոյ տեղի ունեցած քրիստոնեաների դաւանափոխութիւնները համարւում էին բռնութեամբ իրագործուած եւ չէին համարւում օրինական, ուստի իրաւունք էր տրւում դրանից առաջ քրիստոնեայ եղածներին ազատ վերադառնալ իրենց կրօնին[25]: Փաստօրէն դատապարտւում էր պատերազմի ընթացքում կայսրութեան ոչ մահմետական բնակչութեան, այդ թւում՝ հայերի, նկատմամբ ցեղասպանութեանը զուգահեռ բռնի իսլամացման ենթարկելու թուրքական իշխանութիւնների քաղաքականութիւնը: Նոյն յօդուածով դատապարտւում էին նաեւ պատերազմի ժամանակ կայսրութեան բնակչութեան նկատմամբ գործադրած վայրագութիւնները եւ օսմանեան կառավարութեան վրայ պարտաւորութիւն էր դրւում որոնել եւ ազատ արձակել 1914 նոյեմբերի 1-ից յետոյ անհետացած, առեւանգուած, ներկալուած եւ ազատագրկուած ամէն ցեղի եւ կրօնի անձանց[26]: Ակնյայտ է, որ խօսքը կայսրութեան ոչ մահմետականների, առաջին հերթին՝ հայերի մասին է, որոնք իշխանութիւնների կողմից ենթարկուել էին զանգուածային բնաջնջման եւ տեղահանութիւնների: Այս գործը սակայն չէր վստահւում թուրքական իշխանութիւններին, այլ ենթադրւում էր Ազգերի լիկայի խորհրդի կողմից ստեղծել խառը յանձնաժողով, որը տուժածների, նրանց ընտանիքի անդամների եւ մերձաւորների բողոքների հիման վրայ պէտք է հետաքննութիւններ կատարէր՝ նշուած խմբերի անձանց յայտնաբերելու եւ ազատ արձակելու նպատակով: Օսմանեան կառավարութիւնն իր հերթին պարտաւորւում էր ամէն կերպ աջակցել այդ յանձնաժողովի գործունէութեանը, ապահովել նրա որոշումների կատարումը, երաշխաւորեր տուժածների իրաւունքների վերականգնումը եւ նրանց անվտանգութիւնը:

Սեւրի պայմանագրով նաեւ պատասխանատուութիւն էր սահմանւում Ցեղասպանութեանը զուգահեռ իրականացուած Օսմանեան կայսրութեան հայ ազգաբնակչութեան





զանգուածային ունեզրկման համար: Այսպէս՝ Սեւրի պայմանագրի 144 յօդուածը օսմանեան կառավարութեանը պարտաւորեցնում է ոչ միայն ուժը կորցրած ճանաչել իր կողմից ընդունուած «լքեալ գոյքի» մասին 1915-ի ժամանակաւոր օրէնքն ու դրա լրացումները, որոնցով օրինականացուել էր Ցեղասպանութեան ենթարկուած արեւմտահայութեան զանգուածային ունեզրկման քաղաքականութիւնը, այլեւ արգելում է նման օրէնքների ընդունումն ապագայում: Այս յօդուածի նշանակութիւնը չափազանց կարեւոր է Ցեղասպանութեան զոհ դարձած հայ ազգաբնակչութեան իրաւունքներն իր իսկ սեփականութեան նկատմամբ վերականգնելու տեսակէտից: Տուեալ յօդուածում սահմանւում էին նաեւ շօշափելի գործիքակազմեր, որոնցով վերականգնուելու էին արեւմտահայութեան սեփականութեան իրաւունքները:

Մասնաւորապէս, թուրքական կառավարութիւնը պարտաւորւում էր հնարաւորութեան սահմաններում նպաստել, որպէսզի կայսրութեան այլազգի այն քաղաքացիները, որոնք աքսորուել կամ 1914 յունուարի 1-ից յետոյ գազանութիւնների հանդէպ ունեցած վախից դրդուած գաղթել էին, վերադառնային իրենց բնակավայրեր[27]: Օսմանեան կառավարութիւնն ընդունում էր, որ կայսրութեան յիշեալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող անշարժ կամ շարժական գոյքերը յայտնաբերուելու դէպքում, ում ձեռքում էլ դրանք լինեն, պէտք է որքան հնարաւոր է շուտ վերադարձուեն օրինական տէրերին՝ արեւմտահայերին: Ընդ որում, վերադարձուող գոյքերը պէտք է ազատուած լինեն ցանկացած պարտքերից, որոնցով նրանք կարող էին ծանրաբեռնուած լինել նոր տէրերի կողմից եւ վերադարձուելու էին առանց նոր սեփականատէրերին եւ օգտագործողներին որեւէ հատուցման:

Բացի արեւմտահայութեան սեփականութեան իրաւունքների վերականգնման դրոյթներ սահմանելուց, յօդուածը տուեալ գործընթացը վերահսկող գործիքակազմեր էլ էր նախատեսում: Օսմանեան կառավարութիւնը համաձայնւում էր, որ Ազգերի լիկայի խորհրդի կողմից ստեղծուեն միջնորդ յանձնաժողովներ՝ թուրքական կառավարութեան եւ տուժած համայնքի մէկական ներկայացուցիչների եւ Ազգերի լիկայի խորհրդի կողմից նշանակուած նախագահի կազմով,

սեփականութեան հետ կապուած հարցերը եւ վէճերը քննելու եւ լուծելու համար: Այդ յանձնաժողովները օժտուած են լինելու լայն լիազօրութիւններով, մասնաւորապէս իրաւասու էին հրամաններ տալ.

Ա. Գոյքի վերանորոգման եւ վերականգնողական աշխատանքներ կատարելու հետ կապուած:

Բ. Վայրագութիւնների կամ տեղահանութիւնների մեղաւորներին մեկուսացնելու եւ այդ անձանց գոյքի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու հարցերում:

Գ. 1914 յունուարի 1-ից յետոյ տուժած համայնքի մահացած կամ անհետացած անդամներին պատկանող գոյքերի եւ ամէն տեսակ սեփականութեան վերադարձնելու հարցերով:

Դ. 1914 յունուարի 1-ից յետոյ անշարժ գոյքի վաճառման կամ նրա նկատմամբ սեփականութեան իրաւունքների հաստատման աքթերի չեղեալ յայտարարելու հարցերով:

Այն դէպքերում, երբ յանձնաժողովը չեղեալ կը համարէր գոյքի նկատմամբ նոր սեփականատէրերի իրաւունքները, այդ նոր տէրերին փոխհատուցելու պարտականութիւնը դրուելու էր թուրքական կառավարութեան վրայ եւ դա առիթ չէր կարող հանդիսանալ այդ գոյքի օրինական տէրերի իրաւունքների վերականգնումը ուշացնելու համար: Օսմանեան կառավարութիւնը պարտաւորւում էր հնարաւորութեան սահմաններում նպաստել յանձնաժողովի որոշումների կատարմանը, իսկ յանձնաժողովի որոշումները անբեկանելի էին եւ դրանց չէր կարող հակադրուել օսմանեան դատական կամ վարչական իշխանութիւնների կողմից ընդունուած որոշումները[28]: Այսպիսով պայմանագրում հայ բնակչութեան կրած նիւթական կորուստների վերականգնման եւ դրանց հետեւանքների յաղթահարման առումով բաւականին իրատեսական եւ արդիւնաւէտ միջոցներ եւ գործիքակազմեր էին առաջ քաշւում: Այս դրոյթները չեն կորցրել իրենց արդիականութիւնը եւ լիովին կարող են դրուել Հայոց ցեղասպանութեան նիւթական հետեւանքների յաղթահարման գործընթացի հիմքում:

Սեւրի պայմանագրի 144 յօդուածին լրացնելու էր գալիս 288-րդ յօդուածը, որով նախատեսւում էր, որ դաշնակից երկրի կամ նոր պետութեան հպատակութիւն ipso facto ձեռք բերած նախկին թուրքահպատակների Թուրքիայում մնացած ունեցուածքը, իրաւունքներն ու շահերը ներկայ կամ մէկ այլ պայմանագրով Թուրքիայից անջատուած տարածքներում պէտք է վերադարձուեն նրանց իրենց ներկայ վիճակով[29]: Սա նշանակում էր, որ Թուրքիայի կողմից արեւմտահայերին հպատակութիւնից զրկելը, կամ նրանց կողմից նոր պետութեան հպատակութիւն ձեռք բերելը թուրքական իշխանութիւնների համար չէր կարող հիմք հանդիսանալ նրանց ունեցուածքից, իրաւունքներից կամ շահերից զրկելու համար:

Սեւրի պայմանագիրը ստորագրուեց այն ժամանակ, երբ օսմանեան կառավարութիւնը վերջին շնչում էր: Յատկանշական է, որ Օսմանեան կայսրութիւնն արդէն սկսել էր Սեւրի պայմանագրի վավերացման գործընթացը: 1920 դեկտեմբերի 23-ին թուրքական խորհրդարանի վերին պալատը՝ Սենատը, իսկ 1921 յունուարի 30-ին ստորին պալատը համաձայնութիւն էին տուել վաւերացնելու Սեւրի պայմանագիրը[30]: Սակայն ներքին ու արտաքին գործօնները հնարաւորութիւն չտուեցին, որ թուրքական պետութեան կողմից սկսուած վաւերացման գործընթացը հասցուի իր տրամաբանական աւարտին՝ օրինական ուժի մէջ մտցնելով Սեւրի պայմանագիրը: Մի կողմից գլուխ բարձրացրած քեմալականութիւնը, վերածուելով քաղաքական եւ ռազմական գործօնի, աստիճանաբար իր ձեռքն էր վերցնում երկրի իշխանութիւնը, միւս կողմից քեմալա-պոլշեւիկեան մերձեցումը եւ քեմալականներին սիրաշահելու հարցում Խորհրդային Ռուսաստանի հետ մրցակցութեան մէջ մտած եւրոպական տէրութիւնների գործունէութիւնը, ուղղակի կանխեցին հենց թուրքական պետութեան կողմից սկիզբ դրուած Սեւրի պայմանագրի վաւերացման գործընթացը:

1920-ի աշնանը սկսուած թուրքական արշաւանքի եւ թուրքական հրամանատարութեան կողմից ներկայացուող վերջնագրերի պայմաններում հայկական պատուիրակութիւնը դեկտեմբերի 2-ի լոյս 3-ի գիշերը ստորագրեց Հայաստանի Ա. Հանրապետութեան վերջին՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Ինչպէս յայտնի է, այս պայմանագրի ստորագրումից ժամեր առաջ՝ դեկտեմբերի 2-ին, Դրոն եւ Համբարձում Տէրտէրեանը Ռուսաստանի Խորհրդային Ֆետերաթիւ Սոցիալիստական Հանրապետութեան ներկայացուցիչ Պորիս Լեգրանի հետ արդէն ստորագրել էին Երեւանի պայմանագիրը, որով իշխանութիւնը յանձնուել էր Հայ հեղկոմին: Այսպիսով՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը հայկական կողմից ստորագրել էին արդէն լիազօրութիւնները վայր դրած կառավարութեան ներկայացուցիչները, որոնք այլեւս իրաւասու չէին դա անելու, հետեւաբար տուեալ պայմանագիրը վաւերական համարուել չի կարող:

Ալեքսանդրապոլի ապօրինի պայմանագրով թուրքերը նախ փորձում էին նոր տարածքներ կտրել Հայաստանից՝ ընդհանուր առմամբ 20.7 հազար քառ. քմ: Փաստաթղթի 2-րդ յօդուածը յիշեցնում էր չեղարկուած Պրեսթ Լիթովսկի պայմանագրի 4-րդ յօդուածը, որի հիման վրայ թուրքական զօրքերի առկայութեան պայմաններում Կարսի, Արտահանի եւ Պաթումի շրջաններում անցկացուեց կեղծ հանրաքուէ, որի ժամանակ այդ տարածքների բնակչութեանը պարտադրուեց թուրքական պետութեան կազմի մէջ մտնելու որոշումը: Ալեքսանդրապոլի պայմանագրի 2-րդ յօդուածով այդ նոյն սկզբունքով, օգտագործելով բռնի ուժի պայմաններում «հանրաքուէներ» անցկացնելու փորձը, թուրքերն իրենց ժամանակաւոր հսկողութիւնն էին հաստատելու Նախիջեւանի, Շարուրի եւ Շահթախտիի շրջանների վրայ, որպէսզի հանրաքուէի միջոցով այդ շրջաններում հաստատուէր նոր վարչակարգ, իսկ Հայաստանը պարտաւորւում էր չմիջամտել այդ վարչակարգի հաստատման գործընթացին, անկախ այն բանից, թէ այն որ կողմը կը թեքուէր[31]:

Պայմանագրի 6-րդ յօդուածով արգելւում էր իրենց բնակավայրեր վերադառնալ այն գաղթականներին, ովքեր արտաքսուել էին Առաջին աշխարհամարտի ընթացքում եւ թշնամու շարքերում կռուել էին իրենց կառավարութեան դէմ: Այս «հիմնաւորումներով» թուրքական իշխանութիւններն իրաւական հիմք էին նախապատրաստում օսմանահպատակ բոլոր հայերի վերադարձն իրենց բնակավայրեր արգելելու համար: Նշուած յօդուածի սահմանափակող դրոյթները լրացուում էին 7-րդ յօդուածով, որով վերադառնալու թոյլտուութիւն ստացած գաղթականների ներգաղթի համար սահմանում էր մէկ տարւան ժամկէտ, որի լրանալուց յետոյ նրանց վերադարձի վերաբերեալ ցանկացած պահանջ մերժուելու էր: Փաստաթղթի 8-րդ յօդուածով էլ թուրքական կառավարութիւնը հրաժարւում էր հատուցել պատերազմի հետեւանքով Հայաստանին հասցուած հսկայական ելեւմտական կորուստները[32]: Այսպիսով, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ յօդուածներով հայ ժողովրդին կրկնակի նիւթական վնաս էր հասցուում, մի կողմից՝ փաստօրէն արգելւում էր Ցեղասպանութիւնը վերապրած հայերին վերադառնալ իրենց հայրենիք եւ վերականգնել իրենց բռնագրաւուած շարժական ու անշարժ գոյքը, միւս կողմից՝ Հայաստանի նկատմամբ սկսուած գաւթողական պատերազմը համարւում էր արդարացի եւ դրա նիւթական հետեւանքների ծանրութիւնը կրկին թողնւում էր հայ ժողովրդի ուսերին:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 10-րդ յօդուածով Հայաստանին պարտադրւում էր հրաժարուել Սեւրի պայմանագրով իրեն տրուած իրաւունքներից, ինչին լրացնելու էր գալիս 14-րդ յօդուածը, որով Հայաստանը նաեւ պարտաւորւում էր անվաեր ճանաչել այն բոլոր պայմանագրերը, որոնք ապագայում կարող են կնքուել ի վնաս Թուրքիայի շահերի[33]:

Միջազգային իրաւունքում այդ պահին արդէն վաղուց գործող ռազմական ուժի կիրառմամբ կամ դրա սպառնալիքի միջոցով մի պետութեան կողմից միւսին իր կամքը պարտադրելու անընդունելութիւնը, որն ամրագրուած էր Հաագայի 1907 հոկտեմբերի 18-ի «Միջազգային հակամարտութիւնները խաղաղ կարգաւորելու մասին» եւ «Պայմանագրային պարտաւորութիւնների կատարման հարցում ուժի կիրառման սահմանափակման մասին» ուխտերում, ներառուեց նաեւ Ազգերի լիկայի հիմնադիր փաստաթղթերում: Լիկայի կանոնադրութեան յօդուածներում տեղ գտան ազգերի միջեւ յարաբերութիւններում ստանձնած պարտաւորութիւնները յարգելու եւ կատարելու, ինչպէս նաեւ պետութիւնների տարածքային ամբողջականութիւնը եւ քաղաքական անկախութիւնը չխախտելու սկզբունքները: Նշուած սկզբունքները խախտելու դէպքում, Ազգերի լիկայի կանոնադրութեան համաձայն, կազմակերպութիւնն իրաւասու էր անգամ դիմելու պատժամիջոցների, ընդհուպ մինչեւ ռազմական ուժի կիրառման՝ արդարութիւնն ու խաղաղութիւնը վերականգնելու համար[34]: Այսպիսով, տուեալ պահին գործող միջազգային իրաւունքի նորմերի կոպիտ խախտումներով Հայաստանին Ալեքսանդրապոլի պայմանագրով պարտադրուած դրոյթներն առ ոչինչ են:

Ինչպէս Պաթումի, այնպէս էլ Ալեքսանդրապոլի պայմանագիրն ապօրինի լինելուց բացի անգամ չի մտել օրինական ուժի մէջ: Պայմանագրի 18-րդ յօդուածի համաձայն, այն ուժի մէջ էր մտնելու վաւերացումից եւ վաւերացման օրինակները մէկ ամսուան ընթացքում Անկորայում փոխանակուելուց յետոյ[35], սակայն այն ընդհանրապէս չի վաւերացուել:

Ամփոփելով Հայկական հարցին առնչուող Առաջին Հանրապետութեան կնքած միջազգային պայմանագրերի քննութիւնը, կարող ենք արձանագրել, որ այդ փաստաթղթերը Հայաստանի Հանրապետութեան կողմից կնքւում էին բաւական լարուած միջազգային իրավիճակում՝ հարեւան պետութիւնների կողմից սանձազերծուած պատերազմների եւ դաշնակից պետութիւնների կողմից գործուն օգնութիւն եւ պաշտպանութիւն ստանալու հնարաւորութիւնից զրկուած լինելու պայմաններում: Պաթումի եւ Ալեքսանդրապոլի ապօրինի պայմանագրերի ստորագրումը Հայաստանին պարտադրուեց թուրքական զօրքերի արշաւանքների եւ թուրքական կողմի ներկայացրած վերջնագրերի պայմաններում: Հայկական հարցի հետ կապուած Սեւրի պայմանագիրը թերեւս միակ միջազգային պայմանագիրն էր, որ Հայաստանը կնքեց իր ազատ կամաարտայայտութեամբ, որն աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխութեան պատճառով այն ստորագրողների կողմից չվաւերացուեց եւ չմտաւ ուժի մէջ:

**ԱՐՄԷՆ ՄԱՐՈՒՔԵԱՆ**

[1].- Աւետիսեան Հ., Հայկական հարցը 1918 թուականին, Եր., 1997, էջ 255-256:
[2]. ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 9, թ. 6:
[3].- ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 9, թ. 3-5:
[4].- Նոյն տեղում, թ. 5:
[5].- Տե՛ս Международное право. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001.
[6].- ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 9, թ. 6:
[7].- Հայաստանը միջազգային դիւանագիտութեան և սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828–1917), խմբագիր Ջ. Կիրակոսեան, Եր., 1972, էջ 538:
[8].- Նոյն տեղում, էջ 771:
[9].- Նոյն տեղում, էջ 538 - 539:
[10].-Կիրակոսեան Ա., Հայկական հարցը եւ հայերի ցեղասպանութիւնը, Եր., 2006, էջ 21:
[11].- Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 184.
[12].- Տե՛ս Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 676:
[13].- Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), Ер., 1995, с. 15.
[14].- Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, с. 182.
[15].- Հայաստանը...փաստաթղթերում, էջ 673:
[16].- Տե՛ս Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М., 1927, с. 31.
[17].- Տե՛ս Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 677:
[18].- Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, с. 112.
[19].- Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, с. 184.
[20]. Թեոնոն Ի., Անպատժելիութիւն, վրէժ և ժխտում. հայկական ցեղասպանութիւնը միջազգային ատեանների առջև, Եր., 2003, էջ 10:
[21].- Նոյն տեղում:
[22].- Նոյն տեղում, էջ 11:
[23].- Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена "комиссии примирения" Гюндуз Актана), М., 2002, с. 32–33.
[24].- Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, с. 38.
[25].- Նոյն տեղում, էջ 41:
[26].- Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, с. 41.
[27].- Նոյն տեղում, էջ 42:
[28].- Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, с. 43.
[29].- Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, p. 66. http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf
[30].- Հայաստանը...փաստաթղթերում, էջ 59:
[31].- ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 93:
[32].- Նոյն տեղում, թ. 98:
[33].- ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թթ. 98-99:
[34].- Տե՛ս Версальский мирный договор. Полный перевод с французского под редакцией Ю. В. Ключникова и А. Сабанина. М., 1925, с. 7–15.
[35].- ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 63, թ. 17:





# ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ՝ ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Թրքական բանակը երկրորդ անգամ խախտեց Պարսկաստանի չէզոքութիւնը 1918 թուին: Այս անգամ Ալի Իհսան Փաշայի հրամանատարութեամբ. դա թրքական բանակի աջ թեւն էր, որ նպատակ ուներ խուժելու արեւելեան (Կովկասեան) Հայաստան եւ ջնջելու հայութիւնը, լրացնելու համար արեւմտահայերի 1915-ի Եղեռնը[1]:

Պարսիկ պատմաբան Քաւէ Բայաթը իր «Պանթուրքիզմը եւ Իրանը» աշխատութիւնում անդրադառնալով նոյն թեմային մատնանշել է. «... Իր նախնիների նպատակների իրականացման ճամբին, Իհսան փաշան Համաշխարհային պատերազմի ընթացքում քիւրտ հրոսակախմբերի հետ ներխուժում է Թաւրիզ եւ ռուսների նահանջից յետոյ իսլամականութեան անուան տակ կարճ ժամանակընթացքում այնպիսի արհաւիրքներ է գործում, որ ժողովուրդը ցարական Ռուսաստանի բազմամեայ զուլումն ու անարդարութիւնները մոռացութեան տալիս, ու քանի որ անյոյս էին կենտրոնի օժանդակութիւնից, Աստծուց հայցում էին ռուսների վերադարձը եւ «Կրօնակից եղբայրների» փորձանքից ազատուելը... »[2]:

Այս կապակցութեամբ յատկանշելի է 1918-ի յուլիսին, նոյնինքն Ալի Իհսան Փաշայի խոստովանութիւնը (Զուլֆայի ճամբի վրայ դիմաւորող պետական ու հասարակական խաւերի, ինչպէս նաեւ՝ թաւրիզահայ համայնքի ներկայացուցիչների առջեւ ունեցած իր ճառում)[3], Խոյի եւ այլ շրջանների հայաբնակ գիւղերի կոտորածների մասին, որտեղ նա ուղղակիօրէն յայտարարել է. «... Որ ինքը հրամայել է կոտորել Խոյի, Մակուի հայերին..., բայց ոչ միայն Խոյի եւ Մակուի, այլեւ Ս. Թադէի վանք ապաստանած 83 հայերին, Ղարադաղի Դզմարի շրջանի հայկական հինգ գիւղերի բնակիչներին...»[4]:

«... Այս մէջբերումները,- գրում է Անտրէ Ամուրեանը,- որ արի թարգմանաբար, Հայր Պ. Ֆրանսէնի Ֆրանսերէն արխիւից, բացառիկ վկայութիւններ են եւ այնպիսի մանրամասնութիւններով, որ մինչեւ այժմ յայտնի չէին: Ուրեմն բացառիկ փաստագրութեան հետ գործ ունենք եւ առաջին անգամն է, որ հրատարակում ենք: «Հայ Դատի»-ի համար սրանք կարեւոր նիւթեր եւ փաստեր են պարունակում»[5], չնայած, որ Պարսկաստանի